ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«20» մարտ 2024թ.

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

ՈՐՈՇՈՒՄ No. 367-Վ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ ՎԱՀԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՈՒԼԱՆՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 3829/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ՎԱՀԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՈՒԼԱՆՅԱՆԻ (Հասցե Գեղարքունիքի մարզ, Սևան, Նալբանդյան փ., 51շ., բն.20 ՀՎՀՀ 75469565, ՀԾՀ՝1101851023) չկատարված հարկային պարտավորությունը 14.07.2023 թվականի դրությամբ կազմել է 3.533.587 դրամ, որից հարկ՝ 3.432.000 դրամ, տույժ՝ 101.587 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 27.02.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար:

Ֆիզիկական անձ Վահե Գուլանյանը 25.03.2024թ. ՀՀ ՊԵԿ է ներկայացրել է գրավոր դիմում , առ այն, որ Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան, ք.Սևան Նաիրյան փողոց 167/1 հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ վաճառքի ընդհանուր գումարը կազմել է 88.000.000ՀՀ դրամ և նշել, որ օտարումից առաջացած հարկերը վճարվել է Գնորդ՝ < ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ-ի կողմից:

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անժարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ Վահե Գուլանյանի կողմից 16.09.2022 թվականին <ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ-ին /Ստեփանակերտ, Աջափնյակի թղմ., 2շ./, օտարվել է Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան, ք.Սևան Նաիրյան փողոց 167/1 հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմվել է 88.000.000 ՀՀ դրամ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից 23.05.2023թ. հարցում է կատարվել Արցախի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտե՝<ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ-ի կողմից որպես հարկային գործակալ վերոհիշյալ գործարքից եկամտային հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ տեղեկությունների ստանալու համար:

13.06.2023թվականին Արցախի հանրապետության ՊԵԿ-ից ստացված պատասխան գրության և կից տեղեկությունների համաձայն ՝<ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկվում նշված գործարքի մասով ներառված եկամտի ընդհանուր գումարը կազմել է 88.000.000 ՀՀ դրամ, որից էլ հաշվարկվել է եկամտային հարկ 6% դրույքաչափով՝ 5.280.000 ՀՀ դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/ 143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները, որտեղ ֆիզիկական անձի կողմից գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպությունից ստացվող եկամուտները որպես նվազեցվող եկամուտներ սահմանված չեն:

Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 9-րդ մասի գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով /բացառությամբ սույն հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված դեպքերի/ եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-3-րդ մասերին համապատասխան՝ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ-ից դուրս ստացված կամ ստացման ենթակա՝ եկամտային հարկի հարկման օբյեկտը ներառվում են այդ ֆիզիկական անձանց՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի մեջ և ենթակա են հարկման ՀՀ –ում օրենսգրքով սահմանված կարգով, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ: ՀՀ ռեզիդենտ ֆիզիկակկն անձանց հարկման նպատակով նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որոշվող հարկման օբյեկտների գծով հաշվարկված հարկի գումարները նվազեցվում են համապատասխան հարկի այն գումարների չափերով, որոնց ֆիզիկական անձանցից գանձվել են օտարեկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հաշվի առնելով, այն որ <ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ-ն չի կարող հանդիսանալ հարկային գործակալ՝ հետևաբար ֆիզիկական անձ Վահե Գուլանյանը վերը նշված օտարման գործարքի մասով կրում է օրենսգրքի 150-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույքաչափերով եկամտային հարկ հաշվարկելու և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորություն:

Ֆիզիկական անձ ՎԱՀԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՈՒԼԱՆՅԱՆԻ կողմից չի ներկայացվել 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կողմից կազմված թիվ 3829/2023/Ե/Ա արձանագրությունում 5.280.000 դրամ եկամտային հարկից ՀՀ հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված տեսակարար կշիռների մեթոդով առանձնացվել է շինության օտարման մասով առաջացող եկամտային հարկի գումարը՝ 5.148.000ՀՀ դրամը, որը ամբողջությամբ նվազեցվել է արձանագրությունում հաշվարկված եկամտային հարկի գումարից:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 3.533.587 դրամ, որից հարկի գումար 3.432.000 ՀՀ դրամ, տույժ 101.587 ՀՀ դրամ:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ֆիզիկական անձ ՎԱՀԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՈՒԼԱՆՅԱՆԻՑ գանձել **3.533.587** ՀՀ դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

14.07.2023թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	01.05.2023թ.	3.432.000	101.587		3.533.587	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուց հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում, կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան
հեռ.010 309191 /9136/